

ԿԵՆՍԱԹՅՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ՀՀ-ՈՒՄ*

ԱՐՄԻՆԵ ՍԶԱՆՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
ֆինանսական ֆակուլտետի ֆինանսների ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
թ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
am-80@mail.ru

Սոցիալական պաշտպանությունը ՀՀ պետական բաղադրականության գերակայություններից է: Կենսաթոշակային բարեփոխումների համատեքստում նպատակ է դրվել ներկայացնել այնպիսի համակարգի ստեղծման անհրաժեշտությունը, որ յուրաքանչյուր տարեց կամ ծեր մարդու համար կապահովի որևէ տեսակի եկամուտ, նվազագույն՝ աղքատության շեմը գերազանցող նպաստից մինչև կենսաթոշակային տարիքն ունեցած աշխատավարձի կամ եկամտի փոխհատուցում:

Հոդվածում մեկնաբանվել են այդ գործընթացի հիմնական առանձնահատկությունները և վեր են հանվել նախկինում գործող ու ինքնաֆինանսավորվող կենսաթոշակային համակարգերի չլուծակցման ու կատարելագործման հիմնախնդիրները, առկա բացթողումները: Ներկայացվել են ՀՀ և այլ երկրների կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ընթացքը և գործուն մեխանիզմների ստեղծման շրջանակը, նաև վերլուծվել է բաշխողական և կուտակային կենսաթոշակային համակարգը բնութագրող պետական բյուջեի ցուցանիշների դինամիկան:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են համեմատական, ֆինանսական վերլուծության և այլ մեթոդներ:

Հոդվածը ներառում է ապահովագրական և ոչ ապահովագրական հիմքի վրա սոցիալական աջակցության հաշվարկման մեխանիզմի մեթոդաբանությունը, իսկ եկրահանգումներն ու առաջարկությունները հիմնականում ընդգրկում են օրենսդրական դրույթների սահմանման հետ կապված հարցադրումները, որոնց վերանայման պարագայում կարող ենք ունենալ հասարակություն-պետություն փոխվստահելի հարաբերությունների ավելի բարձր մակարդակի ձևավորման ակնկալիքներ:

Հիմնաբառեր՝ կենսաթոշակ, սոցիալական նպաստ, կուտակային կենսաթոշակային բաղադրիչ, աղքատություն, սոցիալական պաշտպանություն, ֆինանսական հնարավորություններ, կենսամակարդակ:

Կենսաթոշակային հարաբերությունների ձևավորման ու կարգավորման հիմնահարցերի պարզաբանման տեսանկյունից նպատակահարմար է անդրադարձ կատարել արտաբյուջետային ֆոնդերի ձևավորման ու զարգացման պատմական ընթացքին: Ըստ նպատակային նշանակության՝ արտաբյուջետային ֆոնդերը դասակարգվում են տնտեսական, սոցիալական և գիտական ֆոնդերի²⁴⁴: Մի շարք

* Հոդվածը ներկայացվել է 13.02.2020թ., գրախոսվել՝ 21.02.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.04.2020թ.:

²⁴⁴ Довгая О. В., Государственные внебюджетные фонды: учебное пособие для бакалавриата и магистратуры.-М.-Берлин: Директ-Медия, 2015, էջ 11.

երկրներում սոցիալական նշանակության ֆոնդերին են վերաբերում կենսաթոշակային, սոցիալական ապահովագրության, պարտադիր բժշկական ապահովագրության ֆեդերալ կամ տարածքային և զբաղվածության պետական ֆոնդերը²⁴⁵:

Բաշխողական կենսաթոշակային համակարգում կենսաթոշակային հարաբերությունների կարգավորման գործընթացը ՀՀ-ում իրականացվում է բյուջետային համակարգի շրջանակներում, բայց չենք կարող չփաստել այն հանգամանքը, որ ավելի քան մեկ տասնամյակ կենսաթոշակների, մասնավորապես աշխատանքային կենսաթոշակների ֆինանսավորման հիմնական աղբյուրը ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամն է եղել: Այն 2005 թվականին ընդգրկվեց բյուջետային համակարգի առաջին մակարդակում, իսկ 2008 թվականին արդեն պարտադիր սոցիալական ապահովության վճարները դարձան պետական բյուջեի եկամուտների ձևավորման կարևոր աղբյուր: Գործատուի կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարի սանդղակը ռեգրեսիվ էր, իսկ վարձու աշխատողները սոցիալական վճարումները կատարում էին 3-8% պրոգրեսիվ դրույքաչափով²⁴⁶:

Ստորև ներկայացվող աղյուսակում կուտակային բաղադրիչի շրջանակում նպատակային սոցիալական վճարներին ավելացվում են նաև պետության կողմից վճարվող գումարները: «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մասնակցի կենսաթոշակային հաշվին կուտակային հատկացումների կատարումը 2020 թվականին կանխատեսվում է 70,0 մլրդ դրամի չափով²⁴⁷: Համեմատության համար նշենք, որ 2019 թվականին այդ հատկացումները նախատեսվել էին 56,8 մլրդ դրամի չափով²⁴⁸:

Աղյուսակ 1.

Կենսաթոշակների ֆինանսավորման բյուջետային ռեսուրսներն ըստ եկամտատեսակների²⁴⁹ (մլրդ դրամ)

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Պետ. բյուջեի ընդամենը եկամուտներ	780.4	880.8	946.2	1071.4	1144.8	1167.7	1171.1	1237.2	1340.9
Հարկեր և տուրքեր	699.4	777.4	878.4	1000.9	1064.1	1087.9	1079.7	1158.1	1257.9

²⁴⁵ Բադախյան Լ. Հ. և ուրիշներ, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», Երևան, «ՍՈՍ» ՍՊԸ, 2010թ., էջ 167:

²⁴⁶ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ՀՀ օրենք, 29 նոյեմբերի 2011թ.:

²⁴⁷ ՀՀ կառավարության 2020 թվականի բյուջետային ուղերձ, էջ 198:

²⁴⁸ «Կենսաթոշակային ապահովություն» 1102 ծրագիր, 12005 միջոցառում, 2019թ.:

²⁴⁹ www.minfin.am

Եկամտա- հարկ	73.9	81.2	91.7	x	x	x	x	x	x
Պարտ. սոց. ապ. վճարներ	105.3	123.4	129.1	x	x	x	x	x	x
Եկամտա- յին հարկ	x	x	x	251.1	289.2	311.7	332.7	341.3	356.6
Նպատ. սոց վճարներ	x	x	x	x	x	10.9	13.4	15.8	17.4

Ինչպես տեսնում ենք, 2015-2018թթ. կտրվածքով ոչ միայն սոցիալական վճարների գումարն է կայուն աճում, այլ նաև եկամտային հարկի գծով հավաքագրումների մակարդակը, ինչը հիմնականում պայմանավորված է եղել աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված եկամուտների աճով (նվազագույն աշխատավարձի փոփոխություն, միջին ամսական աշխատավարձի աճ, աշխատողների թվաքանակի ավելացում և այլն): Վերջին տարիներին առանձին եկամտատեսակների գծով եկամտային հարկի հավաքագրումների փոփոխություններն ունեցել են ոչ միայն ավելացման, այլ նաև նվազման միտումներ՝ պայմանավորված ոչ միայն օրենսդրական փոփոխություններով, այլ նաև տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված անկման միտումներով: Վերոնշյալ գործոնների դրական և բացասական ազդեցությունը շարունակվելու է նաև առաջիկա տարիներին, բայց ընդհանուր հարկի գումարն աճելու է նաև 2020 թվականին, իսկ 2019 թվականի իննամսյա հաշվետվության տվյալներով եկամտային հարկի մուտքերը կազմել են 335,2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 29,2%-ով կամ 75,7 մլրդ դրամով: Ներկայում կենսաթոշակների ֆինանսավորման մասով դիտարկվում է եկամտային հարկի գումարը, իսկ ապագայում կուտակային բաղադրիչի կիրարկմամբ՝ նաև սոցիալական վճարները: Կենսաթոշակների գծով ծախսերի աճը վերջին տարիներին հիմնականում պայմանավորված է եղել կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ծախսերի աճով²⁵⁰:

Սոցիալական պաշտպանությունն իրականացվում է սոցիալական աջակցության, սոցիալական ապահովության և ապահովագրության քաղաքականությունների միջոցով, ինչպես օրինակ՝ ապահովության դեպքում, անկախ ծառայություններ ստացողների անհատական վճարումներից, ՀՀ-ում շահառուները ծեռք են բերում սոցիալական նպաստ ստանալու իրավունք՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու և օրենքով սահմանված այլ դեպքերում: Սոցիալական նպաստները ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեից (նախկինում՝ նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամից): Ի տարբերություն կենսաթոշակների չափի՝ ծերության նպաստը հաստատուն է, և ցանկացած քաղաքացի որպես ծերության նպաստ ամեն ամիս ստանում է կայուն եկամուտ, որը մինչև 2019 թվականը կազմում էր ընդամենը 16 հազար դրամ (հիմնական կենսաթոշակի չափով)²⁵¹: Ծայրահեղ աղքատության հաղթահարման նպատակով սոցիալական նպաստառուներին տրամադրվող գումարը 2019 թվականից այլևս պարենային գծից ներքև չի լինի: Այն սահմանվել է 25500 դրամ և տարեցտարի ավելացման միտում կունենա: Հաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով պարենային (ծայրահեղ)

²⁵⁰ ՀՀ 2015-2018 թվականների պետական բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվություններ:

²⁵¹ ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 32-ի N 1734-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1491-Ն որոշում:

աղբատության գիծը, որը 2016 թվականին կազմել է 23313 դրամ²⁵², կիրառելով 3% գնաճ յուրաքանչյուր տարվա համար: Այս փոփոխությունը վերաբերում է շուրջ 64000 նպաստառուների և սոցիալապես անապահով բաղաբաղների որոշ շրջանակի, որոնց համար 25500 դրամը սահմանվում է որպես նվազագույն աշխատանքային կենսաթոշակ:

Աշխատանքային կենսաթոշակների ֆինանսավորումը 2020 թվականին կկազմի 246,5 մլրդ դրամ՝ 2019 թվականի 222,9 մլրդ դրամ հաստատված ցուցանիշի համեմատությամբ: Նշենք, որ վերջին տարիներին այս ցուցանիշի գծով նույնպես արձանագրվել է կայուն աճ՝ պայմանավորված կենսաթոշակառուների թվաքանակի փոփոխությամբ (հիմնականում թվաքանակն աճում է, բայց օրինակ հասցեականության ապահովման նպատակով վարչարարության ուժեղացման պայմաններում այն կարող է նվազել), «Էլեկտրոնային կենսաթոշակ» համակարգի լիարժեք ներդրմամբ, կենսաթոշակի միջին ամսական չափի փոփոխությամբ²⁵³: 2020 թվականից կենսաթոշակների չափը 10%-ով բարձրացնելու համար անհրաժեշտ կլինի մոտավորապես 25 մլրդ դրամի չափով լրացուցիչ ֆինանսավորում:

Յուրաքանչյուր պետության տնտեսական զարգացման մակարդակով և ֆինանսական հնարավորություններով պայմանավորված՝ սոցիալական ապահովությունը և ապահովագրությունը իրականացվում են տարբեր կառույցների ու մեխանիզմների միջոցով: Լավագույն միջազգային փորձի համատեքստում ներկայացնենք աշխարհի բնակչության 63%-ից ավելին ընդգրկող երկրների միջև համեմատությունը՝ ըստ Մեքսիկոյի Մեքսիկոյի Գլոբալ Կենսաթոշակային Ինդեքս 2019 զեկույցի, որտեղ ընդգրկված չեն ԱՊՀ երկրները: 2019 թվականին ամփոփ գնահատականով Նիդերլանդները և Դանիան եղել են առաջատար՝ համապատասխանաբար 81,0 և 80,3 ինդեքսով և ճանաչվել են A աստիճանի կենսաթոշակային համակարգ ունեցող երկրներ: Առաջին եռյակը լրացնում է Ավստրալիան՝ (B+) 75,3 ինդեքսով: 70-ի սահմանագիծը հատում են Ֆինլանդիան (73,6), Շվեդիան (72,3), Նորվեգիան (71,2), Սինգապուրը (70,8) և Նոր Զելանդիան (70,1): Բացի ամփոփ գնահատականից, նույն հետազոտության շրջանակներում ներկայացվել են հետևյալ ենթացուցանիշները՝ համարժեքություն, կայունություն և ամբողջականություն: Համարժեքության ցուցանիշով առաջատար երեք տեղերում են Իռլանդիան (81,5) Ֆրանսիան (79,1) և Նիդերլանդները (78,5), կայունության ցուցանիշով՝ Դանիան (79,8), Նիդերլանդները (78,3) և Ավստրալիան (73,5), իսկ ամբողջականության ցուցանիշով՝ Ֆինլանդիան (92,3), Նորվեգիան (90,6) և Նիդերլանդները (88,9)²⁵⁴:

Միջազգայնորեն ընդունված չափանիշների համաձայն՝ եթե աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում գերազանցում է 9%-ը, ապա այդ ազգը համարվում է ծերացող²⁵⁵: 2025-2030 թվականներին հատելով 10% սահմանագիծը՝ այդ ցուցանիշը աշխարհում հետագայում նույնպես կունենա բարձրացման միտում²⁵⁶: Հայաստանում նման իրավիճակը պայմանավորված է ինչպես միգրացիոն ակտիվ հոսքերով, այնպես էլ ծնելիության մակարդակի անկմամբ: Բաշխողական կենսաթոշակային համակարգը կենսունակ է, եթե համակարգի բեռնվածության գործակիցը 3 է: Ինչպես բազմաթիվ

²⁵² Հայաստանի սոցիալական պատկերը և աղբատությունը, 2017թ., էջ 40:

²⁵³ ՀՀ կառավարության 2020 թվականի բյուջետային ուղերձ, էջ 198:

²⁵⁴ Melbourne Mercer Global Pension Index 2019, 7p.

²⁵⁵ **Հովհաննիսյան Ռ.**, «ՀՀ կուտակային կենսաթոշակային համակարգի ռիսկերը և VAR-ի գնահատման ներքո պահուստավորման նվազագույն շեմի սահմանումը», Ֆինանսներ և Էկոնոմիկա -12 (#11207-208), 2017թ., էջ 135:

²⁵⁶ International Patterns of Pension Provision II, A Worldwide Overview of Facts and Figures, The World Bank

երկրներում, Հայաստանում նույնպես այս ցուցանիշը մտահոգիչ է, և անհատական հաշվառման համակարգի ներդրումը ինքնանպատակ չպետք է լինի, քանի որ աշխատավարձերի փոփոխության, սղաճի ու տնտեսական զարգացման նման տեմպերն ապագայում կպահանջեն ավելի մեծ գումարներ:

Բնակչության ծերացման հիմնախնդրի նշանակալիությունը տարբեր երկրներում արդեն իսկ ամրագրված փաստ է, և սոցիալ-տնտեսական, քաղաքական, պատմական ազդեցությունների ներքո ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում այս մարտահրավերը մի կողմից, պետության՝ այդ ծավալով կենսաթոշակների ֆինանսավորման պարտավորությունը ստանձնելու անհնարինությունը մյուս կողմից, հրատապ են դարձնում կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը մեր երկրում: Հայաստանի ներկա բազմաստիճան կենսաթոշակային համակարգը բաղկացած է երկու բաղադրիչից՝ բաշխողական և կուտակային: Կուտակային համակարգն ունի մի շարք «առավելություններ», մասնավորապես կուտակային բաղադրիչի շրջանակներում մասնակցի կողմից կատարված սոցիալական վճարները ճշգրտվում են գնաճով²⁵⁷, ՀՀ կենտրոնական բանկը պետական կառավարման այլ մարմինների հետ համատեղ կարող է հաստատել մասնակիցների իրավունքների, օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ մեխանիզմներ ու երաշխիքներ²⁵⁸, բացի արժույթային սահմանափակումից գոյություն ունի նաև կուտակային կենսաթոշակային միջոցներով ներդրումների աշխարհագրական սահմանափակում, ընձեռվել է ժառանգման հնարավորություն մասնակցի ժառանգների կողմից և այլն:

Կարևոր է նաև, որ հստակ տարանջատվեն այն աղբյուրները, որոնք ծառայելու են ապահովագրական և ոչ ապահովագրական հիմքի վրա տրվող կենսաթոշակներին ու նպաստներին: Այն միջոցները, որոնք ուղղվում են կենսաթոշակային ապահովագրության հատվածին, հստակ կապի մեջ պետք է լինեն այդ միջոցների գոյացման աղբյուրների և ֆինանսավորման ծավալների հետ: Կարևորելով 40-50% փոխհատուցման գործակցի ապահովումը՝ նշենք նաև, որ հետագայում անհրաժեշտ պայման պետք է դիտվի նաև կենսաթոշակի մեծության պարտադիր համադրումը նվազագույն կենսապայմանների ապահովման սահմանագծի հետ: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում նշվում է, որ 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված անձանց աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելիս աշխատանքային ստաժում հաշվառվում են մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածները: Այս օրենսդրական դրույթը չի ապահովում արդարության, հավասարության սկզբունքը, և միաժամանակ խզվում է սերունդների համերաշխության ապահովման սկզբունքի հետ կապը: Փաստորեն, կուտակային ինքնաֆինանսավորման կենսաթոշակային համակարգը, ի լրումն բաշխողական կենսաթոշակային համակարգի, չի ձևավորել այդ երկու զուգակցված համակարգերի ամբողջական միասնական մոդելը: Պետք է կարևորել նաև կուտակային կենսաթոշակային համակարգում կամավոր վճարման բաղադրիչի ընդգրկումը՝ պայմանավորված ժամկետային սահմանափակությամբ (օրինակ՝ որոշ ժամանակ անց վճարումների դադարեցումը կամ միջոցների սառեցումը, այդ միջոցների ուղղումն այլ նպատակների և այլն):

Առաջարկությունները կարելի է ամփոփել հետևյալ եզրահանգումների տեսքով.

- Օրենսդրաիրավական դաշտում սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն հասկացությունների հստակ սահմանազատում, ինչը ենթադրում է, որ ապահովագրական տարր

²⁵⁷ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հավելված, 22 դեկտեմբերի 2010թ.:

²⁵⁸ «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» ՀՀ օրենք, 21 հունիսի 2014թ.:

պարունակող հասկացությունները չպետք է ներկայացվեն սոցիալական ապահովություն հասկացության ներքո,

- Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրում միայն ի լրումն բաշխողական կենսաթոշակային համակարգի, այսինքն՝ եթե ներկա կենսաթոշակային համակարգը ապահովում է կենսաթոշակների ֆինանսավորումը՝ հաշվի առնելով սոցիալական վճարներ կատարելու ողջ ժամանակաշրջանը, ապա եկամտային հարկի գործարկմամբ ապագայում կենսաթոշակի մեծության ձևավորման վրա այդ գործոնի ազդեցությունը չի պահպանվում,
- Սպառողական զամբյուղի և եկամուտների բևեռացման մեղմանն ուղղված դիֆերենցված փոխհատուցման գործակցի սահմանում հիմք ընդունելով ավելի ցածր եկամուտներ ունեցողների դեպքում ավելի բարձր փոխհատուցման գործակից ձևավորելու հանգամանքը՝ ի համեմատություն ավելի բարձր եկամուտ ստացողների,
- Պարտադիր սկզբունքով կենսաթոշակային համակարգի ամբողջական ներդրման ժամկետային սահմանափակումների կիրառում, ինչը նշանակում է աշխատողի աշխատանքային պայմանների վատթարացման պայմաններում կամավորության սկզբունքով վճարման հնարավորությունն որոշ դեպքերում և ժամկետներում:

ՀՀ կառավարությունը նպատակադրվել է մինչև 2023 թվականը էապես նվազեցնել աղքատությունը և վերացնել ծայրահեղ աղքատությունը: Պարբերաբար բարձրացվելու են պետական կենսաթոշակների չափերը՝ ապահովելով միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ՝ գնաճի նկատմամբ: Բարեփոխվելու է նաև կուտակային բաղադրիչը՝ խրախուսելով կուտակային միջոցների ներդրումը ՀՀ-ում²⁵⁹: Կենսաթոշակառուների շրջանում ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությամբ ամրագրված է, որ ակտիվ կենսակերպի խրախուսման նպատակով նաև աշխատանքն է դիտարկվում որպես կարևորագույն մարտավարական գործիք:

Ամփոփելով նշենք, որ արժանապատվության ու երջանկության զգացողության մեջ առաջնային նշանակություն ունի սոցիալական պաշտպանությունը, և այս առումով ՀՀ կառավարության համար իրապես գերակա պետք է լինի բնակչության կենսամակարդակի էական բարելավումը, զբաղվածության շարունակական աճը, կենսաթոշակների և աշխատավարձերի իրական աճը, բևեռացման մեղմումը, աղքատություն ծնող ռիսկերի դեմ կանխարգելիչ գործունեությունը, քանի որ սոցիալական հասարակության ձևավորման անհրաժեշտ պահանջներից մեկն էլ սոցիալական արդարության և սոցիալ-տնտեսական հավասարակշռության ապահովումն է:

²⁵⁹ ՀՀ կառավարության ծրագիր, փետրվար 2019թ., էջ 29:

**THE NECESSITY, IMPORTANCE AND DYNAMICS OF
PENSION REFORMS IN THE RA**

ARMINE SCHANYAN

*Associate Professor of the Chair of Finance of the Faculty of Finance of
Armenian State University of Economics,
PhD in Economics, Associate Professor,
Yerevan, Republic of Armenia*

Social protection is one of the priorities of the RA state policy. In the context of pension reform, the aim is to highlight the need to create a system that would provide any elderly or aged person with any kind of income, from the minimum allowance exceeding poverty threshold to compensation of the pension age salary and income. In the article the existing shortcomings, the main features of this process were commented and the main problems of improvement and combination in previously existing and self-funded pension systems were derived.

The article presents the process of implementation of pension reforms in Armenia and other countries and the framework for creating effective mechanisms, also the dynamics of indicators of the state budget is analyzed, which characterize the administrative and accumulative pension system. Comparative, financial analysis and other methods were used during the study.

The article includes the methodology of the mechanism for calculating social assistance on insurance and non-insurance basis, and the conclusions and proposals mainly include issues related to the definition of legislative provisions, in case of revision of which the expectations of forming a higher level of mutually reliable relations between society and the state can be realized.

Key words: pension, social allowance, accumulative pension component, poverty, social protection, financial opportunities, living standard.

**НЕОБХОДИМОСТЬ, ВАЖНОСТЬ И ДИНАМИКА
ПЕНСИОННЫХ РЕФОРМ В РА**

АРМИНЕ СЧАНЯН

*Доцент кафедры финансов Финансового факультета
Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

Социальная защита является одним из приоритетов государственной политики РА. В контексте пенсионной реформы необходимо создание системы, подходящей для каждого пожилого человека, обеспечение человека пенсионного возраста соответствующим видом

дохода, от минимального пособия, которое превышает порог бедности, до компенсации зарплаты или дохода.

В статье прокомментированы имеющиеся недостатки, характерные особенности данного процесса и выведены основные проблемы совершенствования и сочетания пенсионных систем. Представлены процесс осуществления пенсионных реформ в РА и в иных странах, а также рамки создания действенных механизмов. Проанализирована динамика показателей государственного бюджета, характеризующая распорядительную и накопительную пенсионную систему. Во время исследования использовались методы сравнительного, финансового анализа и др.

Статья включает в себя методологию механизма расчета социальной помощи на страховой и нестраховой основе, а выводы и предложения в основном включают вопросы, связанные с определением законодательных положений, в случае пересмотра которых можно будет сформировать более высокий уровень взаимонадежных отношений между обществом и государством.

Ключевые слова: *пенсия, социальное пособие, накопительная пенсионная составляющая, бедность, социальная защита, финансовые возможности, уровень жизни.*